

# Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի 2015թ. նիստերի արձանագրություններ

## Արձանագրություն 5

2015թ. մայիսի 29-ին տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի նիստ՝ նախագահությամբ Ռ.Հակոբյանի, քարտուղարությամբ՝ Թ.Ասոյանի:

Նիստին ներկա էին գիտխորհրդի 31 անդամներից 27-ը:

Օրակարգ՝

1. ԳՊՀ ինքնավերլուծության և ինքնագնահատման գործընթացի մասին:  
/զեկուցող՝ պրոռեկտոր Ն. Կուտուզյան/,
2. 2014-2015 ուսումնական տարվա բակալավրիատի և մագիստրատուրայի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման միջանկյալ արդյունքները առկա և հեռակա ուսուցման ֆակուլտետներում:  
/զեկուցողներ՝ պրոռեկտոր Ն. Կուտուզյան, ֆակուլտետների ղեկաններ Թ. Ասոյան, Մ. Ավագյան, Հ. Ղաջոյան, Ս. Ամիրխանյան/,
3. Ընթացիկ հարցեր:

ԳՊՀ ռեկտոր Ռ.Հակոբյանը, բացելով նիստը, ասաց, որ համալսարանը պետք է հավատարմագրվի, իսկ դրան հասնելու համար անհրաժեշտ է ավարտին հասցնել ներքին գնահատման և ինքնավերլուծության գործընթացը: Աշխատանքը շատ կարևոր է և լուրջ վերաբերմունք է պահանջում: Այնուհետև օրակարգի 1-ին հարցի մասին զեկուցեց ԳՊՀ պրոռեկտոր Ն.Կուտուզյանը:

Նա նշեց, որ ինքնավերլուծության հետ կապված աշխատանքները կատարվել են ըստ այն ժամանակացույցի, որն ընդունվել էր գիտխորհրդի 2015թ. փետրվարի 7-ի նիստում: Աշխատանքի բաժանումը համալսարանի ստորաբաժանումների միջև հնարավորություն տվեց գործընթացում ներգրավել մեծ թվով աշխատակից-ների և յուրաքանչյուր չափանիշ ուսումնասիրել մանրամասնորեն ու խորությամբ: Ն. Կուտուզյանը նշեց, որ շատ արդյունավետ է եղել միասնական քննարկման փուլը, երբ յուրաքանչյուր չափանիշ առանձին-առանձին քննարկվել է, արվել են դիտողություններ, առաջարկություններ, մատնանշվել են թերությունները և, որ շատ կարևոր է, մշակվել են SWOT վերլուծությունները: Միավորելով չափանիշները՝

հնարավորություն է ստեղծվում ուսումնասիրել ինքնավերլուծության ամբողջական տարբերակը, որը դեռևս հղկման կարիք ունի թե՛ տեխնիկական, թե՛ լեզվական և թե՛ իրավական փաստաթղթերի ընդգրկման առումներով:

Օրակարգի 2-րդ հարցը ներկայացրին ֆակուլտետների ղեկանները:

Ն.Կուտուզյանը ներկայացրեց հեռակա ուսուցման ֆակուլտետում տարվող աշխատանքները, որոնք նպատակաուղղված են 2-րդ կիսամյակը պատշաճ կերպով կազմակերպելուն և անցկացնելուն:

Առկա ուսուցման ֆակուլտետներում, ինչպես նշեցին ղեկաններ Թ.Ասոյանը, Հ.Ղաջոյանը, Մ.Ավագյանը և Ս.Ամիրխանյանը, եղել է խորհրդատվությունների, շրջանավարտների դիպլոմների միջուկների պատրաստման, քննական հարցատոմսերի կազմման, քննությունների անցկացման ժամանակաշրջան: Քննաշրջանը դեռ չի ավարտվել, ուստի արդյունքների ամբողջական ամփոփում կատարել առայժմ հնարավոր չէ, կարելի է միայն նախնական որոշ եզրակացություններ անել. քննություններն անցել են բնականոն հունով, հանձնաժողովներն աշխատել են նորմալ աշխատանքային պայմաններում, արտակարգ դեպքեր չեն գրանցվել:

Ընթացիկ հարցերը հիմնականում վերաբերում էին քննաշրջանի ամփոփմանը, դիպլոմների պատրաստմանը և հանձնմանը, որոնց պետք է վերաբերվել ամենայն պատասխանատվությամբ:

Հիմք ընդունելով զեկուցումները՝ գիտխորհուրդը

Որոշեց՝

1. Ն.Կուտուզյանի զեկուցումն ընդունել ի գիտություն:

2. Դեկաններ Թ.Ասոյանի, Հ.Ղաջոյանի, Մ.Ավագյանի, Ս.Ամիրխանյանի զեկուցումներն ընդունել ի գիտություն:

3. Հանձնարարել ղեկանատներին, Ակադեմիական քաղաքականության վարչությանը ցուցաբերել պատասխանատվություն շրջանավարտների դիպլոմների պատրաստման գործընթացում:

Գիտխորհրդի նախագահ՝ Ռ.Հակոբյան

Գիտքարտուղար՝ Թ.Ասոյան